

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՇՏՈՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Փետրվարի 16-ին, Մեծ պահոց Արտաքսման կիրակին, Մայր Տաճարում, հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն, Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցի առթիվ։

Առավոտյան ժամը 12-ին, Մայր Տաճարում, մեղմ և դաշն, պաշտվում է սուրբ պատարագը Ավագ Սեղանի վրա, փակյալ խորանի առաջ։

Սուրբ պատարագին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը։

«Հայր մեր»-ից առաջ, երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի կյանքի և գործունեության մասին դամբանական է խոսում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ «Սիմոն Յովնանու, սիրե՞ս զիս» բնաբանով (Յովհ. ԻԱ 16—17)։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն հոգելույս Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան տարելիցի առթիվ։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է ցավակցություններ և օրհնելով ազգն ու Եկեղեցին, պայծառություն է մաղթում Հայաստանյայց Եկեղեցուն և մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդին։

Խո՜նկ և աղո՜թք երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի հիշատակին։